ՆՈՐ-ԴԱՐ

№ 78 ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ, 8 Մայիսի **1898** Ուրբաթ, 8 Մայիսի ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 78

Տարեկան՝ 10 րուբլի, վեց ամիսը 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., հատ. 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Ցայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Ցայտարարութիւնների գնահատութիւնը՝ 2 կ., բեկւածների համար՝ կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա ա ջ Ն ո ր դ ո ղ. – Կին-բժիշկները։
Ք ր ո ն ի կ ա ն.—Լուրեր։
Մ ա ղ ր ա մ ա ն. — Ձուշուց, Ջամախուց, Գէօղչայից, Մերվից։
Թիֆլիս քաղաքի լուսաւորութեան ինդիրը։
Ջամախու երկաթուղի գծի հետևանքը։
Ք ա ղ ա ք ա կ ա ն. — Սպանիա-ամերիկական պատերազմը։ Խռովութիւններն Իտալիայում։
Խ ա ռ ն լ ս ւ բ ե ր։
Հ ե ռ ա գ ր ե ր ե ր։
Թեր և դէմ։
Բ ա ն ա ս ի ր ա կ ա ն. Բեկորներ. ապերի կուլտուրական կեանքից։
Տ ե ս ի ե կ ա ն ու։
Ց ա յ տ ա ր ա ր ո ւ թ ի ւ ն ն ե ր։

Թիֆլիս, 7 մայիսի 1898 թ.

ԿԻՆ-ԲԺԻՇԿՆԵՐԸ

—

Նախընթաց համարներից մէկում խօսեցինք կին-բժիշկների՝ պետական ծառայութեան մէջ մտնելու մասին։

Բարձրագոյն այդ շնորհով կանայք իրաւունք ունենալով տղամարդկանց հաւասար բժշկական ուսումն ստանալու և բարձր ուսման աստիճանը ձեռք բերելու, իրաւունք են ստանում նաև մտնելու պետական ծառայութեան մէջ իբրև պաշտօնեաներ և անցնելու ծառայութեան բոլոր աստիճանները։

Որովհետև պետութեան ծառայութեան մէջ մտնող տղամարդ պաշտօնեաները ստանում են շքանշաններ ու աստիճաններ՝ չին, տիտղոսներ, որոնց հետ կապուած են և որոշ արտօնութիւններ, ինչպէս և հասնում են զանազան տեսակ համազգեստներ, ուստի կարևոր է խնդիրը թէ կին-բժիշկները իրաւունք ստանալով պետական ծառայութեան մտնելու, ունին տղամարդկանց հաւասար նոյն արտօնութիւնները, սահմանուած են արդեօք նրանց համար էլ որոշ համազգեստ, պիտի ստանան նրանք էլ «քարտուղարի», «աստեսորի», «խորհրդականի» և այլ չիներ։

Կին-բժիշկների պետական ծառայութեան մէջ մտնելու իրաւունքը առ այժմ սահմանափակուած է, բայց աննշան կերպով։

Կին-բժիշկները ծառայութեան մէջ մտնելով համազգեստ չունին, չինները էլ չեն ստանում, բայց պետական ծառայութեան մէջ մտնելով, տղամարդկանց հաւասար ստանում են կարևորագոյն ճանաչուած բոլոր իրաւունքները և ազատ են մնում զանազան տիտղոսներից։

Այդ մասին փետրուարի 23-ին հրատարակած օրէնքում ասուած է, որ կին-բժիշկները պետական ծառայութեան մէջ մտնելով, բացի չինից, շքանշանից և համազգեստից, վայելում են պետական ծառայութեան հետ կապուած բոլոր իրաւունքները տղամարդկանց համահաւասար, որոշ կարգերի պահպանութեամբ։

Այսպէս տղամարդ-բժիշկ ծառայողներին ճանապարհածախքի չափը որոշւում է իրենց չինով, իսկ կին-բժիշկների ծախքի չափը որոշւում է իրենց պաշտօնավարութեան աստիճանով։ Ի նկատի առնելով, որ կին-բժիշկը պենսիան ձեռք է բերել իւր անձնական ծառայութեամբ, նա պենսիա ստանալու իրաւունքը չէ կորցնում մարդու դնալով, ինչպէս և չէ կորցնում այն դէպքերում եթէ մարդու չդնացած ստանում է հօր պենսիան կամ իրրև այրի՝ ամուսնու պենսիան։ Կին-բժշկի որդիքը մօրը մահուանից յետոյ իրաւունք ունեն ստանալու միանուագ օգնութիւն կամ պենսիա, իսկ եթէ միևնոյն ժամանակ դրանց հօրից էլ է պենսիա հասնում, այդ դէպքում իրաւունք ունեն ստանալու երկուսից աւելի մեծագոյնի պենսիան։

Այսպիսով կին-ծառայող բժիշկների իրաւունքները, ինչ էական մասին է վերաբերւում, տղամարդկանց ձեռք բերած իրաւունքներին հաւասարեցնելով, թէ տղամարդիկ և թէ կանայք պաշտօնները ձեռք բերելու համար պէտք է օրէնքով պահանջած ուսումն աւարտեն և ուսման վերջականը ձեռք բերեն պետութեան բժշկական բարձրագոյն հաստատութիւններում։

Ճշմարիտ է, հրատարակած նոր օրէնքից շատ քչերը կարող են օգտուել այժմ, քանի որ կին-բժիշկների թիւը շատ քիչ է, բայց այդ օրէնքով, ինչպէս անցեալ անգամ ասացինք, կանանց իրաւունքների զարգացման գործին զօրաւոր զարկ է տրւում։

Հետզհետէ կըբացուին, ուսման և պետութեան ձգտող, իրենց մտքի ու ձեռքերի աշխատութեամբ ապրել ուզող և անկախ, մարդավարի ու պատուաւոր կեանք սիրող կանանց համար փակուած շատ դռներ։

Մայիսի 1-ից 31-ն ղեկտեմբերի «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում եւ վճարում են 7 ր. 25 կոպէկ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԵԿՈՐՆԵՐ

ԱԶԳԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

—

Վերջին տարիներս Ռուսիայում ուսումը պարտադիր անելու ինդիրը արծարծուեց մամուլի մէջ. ոմանք դնում էին, որ այդ հնարաւոր է, իսկ ոմանք էլ՝ ոչ։ Սակայն մինչ լրագրական վիճաբանութիւնը առաջ էր գնում, մէս կողմից կեանքը իւր պահանջներն էր անում. մի քանի գեմստուանները, որոնք արդէն շատ վաղուց առանձին ուշադրութիւն էին դարձրել իրենց գեմստուայում ուսումը տարածելու վրայ, ծրագրներ մշակեցին իրագործելու համար պարտադիր ուսման գաղափարը։ Բայց այդ էլ միանգամից կարելի չէր գործադրել, որովհետև ոչ նիւթական միջոցները կընկերէին, ոչ ուսումնարանի համար շէնք կար և ոչ էլ ուսուցիչ։

Եթէ այդպիսի գեմստուները, որոնք առաւել պատրաստութիւն և ձեռնհասութիւն ունէին իրագործելու պարտադիր ուսման գաղափարները, հանդիպում են մեծամեծ դժուարութիւնների և կառավարութիւնից մեծագոյնակ օժանդակութիւն են ոգեսում, հասկա լինչ կրնինի առաւել անպատրաստ, առաւել աղքատ գեմստուաններում։ Մենք այդ խնդրին մի ուրիշ անգամ կըդառնանք. միայն առ այժմ այսքանս պէտք է ասել, որ զօրով բան չի լինիլ. ոչ ժողովուրդը պատրաստ է այդ գաղափարն իրագործելու և ոչ էլ Ռուսիայում ուսուցչական ուսումնարանները կարող են այնքան ուսուցիչ հասցնել, որ զոհացնէ պէտքերին։ Արդէն այժմ ևս Ռուսիայում պակասում են ուսուցիչները։ Թէ ուրեմն ինչպիսի խղճալի դրութիւն է ստեղծւում, այդ ամենից պարզ կերպով կերևայ պ. Կազարինսկու մի ժողովածուից, որից քաղում ենք հետևեալ կտորը. «Ես,—ասում է նա,—գնացել էի Զայչեչկովկա գիւղը (Պենի նահանգի, Ումանի գաւառում), ուր 2 ամիս մնալու էի։ Տեղեկանալով, որ գիւղում եկեղեցական-ծխական դպրոց կայ և ուսուցիչն էլ ամառս գիւղն է մնում, վեր կացայ, գնացի գիւղ։ Ուսուցիչը կալում ցորեն էր կալսում։ Գնացինք ներս։ Ուսուցիչը 32—33 տարեկան մի ծոպկատար չեհամօրուս գիւղացի էր. խօսում էր մալօռուսերէն՝ անխնայ կերպով ռուսական բառերը ազճատելով։ Մենք խօսեցինք և ես հետևեալն իմացայ.—Նա պաշտօնավարում էր մի պարզ գիւղում է. ծառայութիւնից վերադառնալով նա օգնականութիւն է լինում կալուածատիրոջ օգեստանը, բայց օրէնքի գէմ բան անելուն համար օգեստանը փակում են, որով հոգատէրը կորցնում է իւր արդիւնքը, իսկ սա իւր ռանիկը։ Ի՞նչ անէր. երկար-բարակ մըտածում է, մտածում ու վճռում է ուսումնարանում ուսուցիչ վարձուել. նա երկար տատանում է այն պատճառով, որ օգեստանը աւելի ռանիկ է տանալիս հղել. գպրոցում նրան միմիայն տարեկան 50 ր. են տալիս եղել։ Բայց նա այդ պաշտօնը շատ անձեռնուտ է համարում, ուստի մտադիր է թողնելու։ Գնացինք դպրոց. դպրոցը գաւառիս սովորական դպրոցներից էր. այսինքն գիւղական մի խեղճ խրճիթ, որը երկու մասի է բաժանուած. մի մասում սովորում են, իսկ միւսը պատժարան էր. սենեակը ցածր էր, երկու փոքրիկ պատուհաններով, յատակը հող. պատերի երկարութեամբ դրած է երկու երկար նստարան՝ մէկը ցածր, նաևելու համար, իսկ միւսը բարձր՝ գրելու։ Բացի այդ կար, մի փոքրիկ չկաֆ գասական պիտոյքների համար. երբ որ չկաֆի դռնակը բաց արեց, մէջը տեսայ մի հասարակ նստարան. «այս ինչ է» հարցրի.— «կարգ պահպանելու համար է, շատ են չարութիւն անում» ասաց նա, և ես հասկացայ։ պ. Կազարինսկու մնաս բարև ասելու միջոցին ուսուցիչը յանկարծ դառնում է նրան խնդրելով, որ միջնորդէ և իրեն Ումանում քաղաքապահի (գորոդովոյ) պաշտօն տան։

Նոյն Կազարինսկին տեղեկութիւններ է հաղորդում մի ուրիշ ուսուցչի մասին, որին տեսել է Ուման քաղաքին մերձակայ Վերբովատայա գիւղում։ Նա այդ գիւղը գալով տեղեկութիւններ է հաւաքում ուսուցչի և ուսումնարանի մասին և իմանում է, որ ուսուցիչը «նորերիցն» է և «գիտուն»։ Ուսումնարանի մասին նա ասում է. «մի այդպիսի ցածր, մութ, ցուրտ և խոնաւ որջ տեսած չէի. ատաստաղը բոլորովին խոնարհել էր և երկու սիւներով պահպանւում. սենեակում բացի նստարանից ուրիշ բան չը կար։ Ուսուցիչն այնտեղ չէր. եկաւ մի 18 տարեկան երիտասարդ հասարակ գիւղական հագուստով։ Սկզբում նա չը փոխուեց և իմ առջև հարցին «такъ точно» էր պատասխանում. խօսում էր մալօռուսերէն, որովհետև ռուսերէն չը գիտէր. նա ոչ դասարանական բաժանումների մասին գաղափար ունէր և ոչ ծրագրի. ուսումնարանում ոչ մատեան կար, ոչ էլ գոնէ մի հասարակ պահարան. ուսուցիչը ինքն էլ իւր ուսումը նոյնպիսի եկեղեցական-ծխական դպրոցումն էր առել։ Ստանում էր տարեկան 40 րուբլի, որից 22 րուբլին տալիս էր տանուտէրին՝ իբրև բնակարանի և ուտելու վարձ։ Այս ուսուցիչն էլ պ. Կազարինսկուն դիմում է խնդրելով, որ միջնորդէ կալուածատիրոջ առաջ, որպէս զի իրեն կառապան վարձէ։

Լուսաւորուած երկրներում հասարակական կեանքի մէջ երևան եկած ոչ մի պակասութիւն անուշադիր չէ մնում։ Պակասութիւնների առաջն առնելու ամենաէական միջոցն, ի հարկէ, այն է, որ պակասութեան պատճառներն ուսումնասիրուին և դրանց բառնալու հնարը մտածուի։ Եւ այդպէս էլ լինում է ուրիշ երկրներում։ Օրինակ առնենք հէնց յանցագործները. շատ անգամ մարդիկ ըստիպուած են յանցանք գործել՝ որովհետև քաղցած են մնում, կամ յանցանք են գործում, որովհետև մանկութիւնից նրանց վարժեցրել են անպատասխանատու պարտաւորութիւնների, կամ բնմունքով մանկութիւնից ընկած են եղել վատ շրջանների մէջ։ Ուստի և յանցագործութիւնը հասարակութեան մէջ որոշակի չափով պակասած կըլինէր, եթէ արդէն մանուկ հասակից յանցագործութեան մէջ ընկնողներին հնարաւորութիւն տային ազնիւ գործով, աշխատանքով պարապելու։

Եւ ներկայումս չկայ մի լուսաւորուած երկիր, որ հէնց այդ խնդրի վրայ էլ ուշադրութիւն դարձրած չլինի։ Այդ կողմից ևս Անգլիան մեծ քայլ է արել և ներկայումս Անգլիայում, գործ դրուած միջոցների շնորհիւ, 1868 թուականից այժմ յանցագործ մանուկների թիւը 15% պակասել է։ Այդ միջոցներից մէկն էլ այն է, որ Անգլիայում բաղդի բերմունքի մատնուած կամ վատ շրջանների մէջ ընկած երեխաներին անգամ, արհեստագիտական դպրոցներ են տալիս։ Այդ դպրոցները միմիայն այդպիսի երեխաների համար են և արդէն յանգանք գործած փոքր մանուկներին այդտեղ չեն ընդունում. դրանց համար էլ առանձին հաստատութիւններ կան։

Արհեստագիտական դպրոցների թիւը քանի գնում աւելանում է Անգլիայում. 1894 թուին 34,683 աշակերտ ունէին այդպիսի դպրոցները, մինչև 1864 թուին դրանց թիւը 1,668 էր։ Եւ այդ միջոցների գործադրութեան հետևանքը արտայայտւում է.—Անգլիայում տարէց տարի յանցագործների թիւը պակասում է։ 1893 թուին տասնվից տարեկանից փոքր յանցագործների թիւը, որոնք պատժի էին ենթարկուած 6,595 էր, 1895 թուին՝ 5,530. մինչդեռ միևնոյն ժամանակամիջոցում ժողովրդի աճելութիւնն էլ աւելանում էր։ Անգլիայի ուղղիչ ուսումնարանները, որոնց կարելի է բանտերի նմանեցնել, 1892 թուին ընդունուած էին 1,257 յանցագործ երեխաներ, իսկ 1895 թուին՝ 3,136 հոգի. ըստ երևոյթին աւելացել է յանցագործ երեխաների թիւը. բայց իսկապէս այդպէս չէ, որովհետև տարէց տարի ուղղիչ ուսումնարանները ընդարձակուելով և շատանալով՝ ընդունուող աշակերտների թիւն էլ աւելանում է ըստ այնմ։

Ինչպէս յայտնի է, Ռուսիայում, նոյն իսկ մեզ մօտ Պովկասում էլ՝ կայ մի այնպիսի ընկերութիւն, որի նպատակն է անչափահաս յանցագործների համար

ՔՐՈՆԻԿՈՆ

«Կաւկազ»-ին հաղորդում են Բորժոմից, թէ մայիսի 3-ին այնտեղ է ժամանել Վրաստանի էքզարխ, Նորին Բարձր Սրբազնութիւն Փլաւեանը և բաղդ է ունեցել ներկայանալու Նորին Կայսերական Բարձրութիւն Թագաժառանգ՝ Մեծ Իշխան Գէորգի Ալէքսանդրովիչին։

—

Ս. Էջմիածնից հեռագրուած է, որ գեր. Անանիա եպիսկոպոսը Ձուշուց անյապաղ վերադառնայ այնտեղ։ Մի քանի մարդիկ, ինչպէս հաղորդում են մեզ Ձուշուց, անկիւններում աշխատում են հեռագիրը ստորագրել տալ նրան առաջնորդ ուղելու համար։ Ժողովուրդը զբաղած է այդ վարմունքից։

—

Վլադիկաւկազի երկաթուղու մի ճիւղը Բեշտաու կայարանից մինչև Ժելեզնովոդսկ՝ մօտ օրերս սկսել է գործել և մարդատար ու ապրանքատար գնացքները կանոնաւոր երթևեկութիւն են անում։

—

Կալմիկների (Ջալմուխ) դրութիւնը բարելաւելու մասին հոգացողութիւնը երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութեան պարտաւորութիւնից անցնում է ներքին գործերի մինիստրութեան։ Կալմիկների հողերը կըմնան դարձեալ արքունական կալուածք և կանցնեն միայն ներքին գործերի մինիստրութեան ժամանակաւոր կառավարութեան։

—

Ղևոնդ Ալիշանի ֆիլոլոգիական ուսումնասիրությունները հայոց հին պատմության վերաբերությամբ։ Ալիշանի հայ հին պատմագրության քննադատությունը ներկայացնում է մի նոր ուղղություն, որ ստեղծել է հայ պատմագրության մեջ։ Ալիշանի ուսումնասիրությունները հայ հին պատմության վերաբերությամբ ունեն մեծ նշանակություն։ Նրանք ցույց են տալիս, որ հայ հին պատմագրությունը ոչ միայն հայ ժողովրդի, այլև ամբողջ Արևելքի պատմության համար ունի մեծ նշանակություն։ Ալիշանի ուսումնասիրությունները հայ հին պատմության վերաբերությամբ ունեն մեծ նշանակություն։ Նրանք ցույց են տալիս, որ հայ հին պատմագրությունը ոչ միայն հայ ժողովրդի, այլև ամբողջ Արևելքի պատմության համար ունի մեծ նշանակություն։

ԱՐԱՐԱՏ. Ծանոթացնում ենք ընթերցողներին հետևյալ նոր հրատարակությունների հետ։ «Ժող. հայոց հնախոսություն» ասվածը ներկայացնում է հայ ժողովրդի կյանքի և պատմության ուսումնասիրությունների մի նոր շրջան։ Ալիշանի ուսումնասիրությունները հայ հին պատմության վերաբերությամբ ունեն մեծ նշանակություն։ Նրանք ցույց են տալիս, որ հայ հին պատմագրությունը ոչ միայն հայ ժողովրդի, այլև ամբողջ Արևելքի պատմության համար ունի մեծ նշանակություն։

ՄՇԱԿ. Ստացանք 1898 թ. մարտի 3-ին։ Ունի 16 էջ։ Գին տարեկան 3 ռուբլի։ Հրատարակվում է Ղարսի մարզում։ Լույս է տեսնում ամեն ուրբաթ օրը։ Ունի 1000 բաժանորդ։ Ալիշանի հայ հին պատմագրության վերաբերությամբ ունեցած ուսումնասիրությունները ունեն մեծ նշանակություն։ Նրանք ցույց են տալիս, որ հայ հին պատմագրությունը ոչ միայն հայ ժողովրդի, այլև ամբողջ Արևելքի պատմության համար ունի մեծ նշանակություն։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ.

Պ. Վերմիշեանի յայտնած մտքի հետ համարեա բոլորը համաձայն էին, ուրեմն և քաղաքի փողոցների լուսավառութեան համար ծախսուելիք դումարը կարծում են, որ ձեռք կրնաբերեն քաղաքի բնակիչներից, որովհետև Եւրոպայում այդպէս է։

Այնուհետև նախ մի ընդհանուր նկատողութիւն. քաղաքային խորհրդում սովորութիւն կայ միշտ օրինակ վերցնել եւրոպական քաղաքները, առանց ուշադրութիւն դարձնելու թէ՝ ինչքան այդ օրինակները կարելի է յարմարեցնել Թիֆլիսին. մի բան կարող է Եւրոպայում շատ դիւրութեամբ գլուխ գալ, իսկ Թիֆլիսում մեծ դժուարութեամբ։ Այդ սովորութիւնը արդարացուած է և այստեղ. որովհետև Եւրոպայում գազային լուսավառութիւնը շատ տեղերում տարածուած է, ուրեմն... ուրեմն պ. Վերմիշեանը և նրա հետ միաբանողները մոռանում են, որ եւրոպային ընդունակ է գնահատել գազային լուսաւորութիւնը, իսկ մենք՝ ոչ. նա գիտէ, թէ գազի վրայ եթէ նոյն իսկ մի քանի կոպէկ աւելի ծախսէ՝ նրանից ինչ օգուտներ կարելի է ստանալ. երկրորդ՝ գազը Եւրոպայում աւելի էժան է, քան նաւթը. մի՞թէ չգիտեն, որ Բագուից կամ Ամերիկայից մինչև Եւրոպա նաւթ հասցնելը մի՛զքան է թանկացնում նաւթի գինը։ Թիֆլիսեցին, որ չգիտէ գնահատել գազի նշանակութիւնը և ամեն բանի վրայ նայում է փողի քանակութեան տեսակէտով, մի՞թէ կը թոյլ տնէ նաւթը և գազով կը լուսաւորէ իւր բնակարանը։

Հ, այդպիսի հիմքով չի կարելի նախատեսնել, որ գազի վրայ ծախսուած փողը կարելի է ստանալ գազի վաճառումից. կարող են մի քանի ընտանիքներ գնել, բայց ընդհանուրը չի հետևել դրանց. փող շատ է գնում։ Այդպիսի փոխառութեան միջոցների վրայ յոյս չի կարելի դնել. պէտք է կամ ուրիշ միջոցներ որոնել, և կամ քաղաքը թողնել նախկին դրութեան մէջ. ի հարկէ, վերջին ձևի կողմնակից չենք, բայց կարծում ենք, որ վտանգ այդ երջանիկ մտքով հանդուրժելու, լաւ կըլինի՝ որ ուրիշ խելացի միջոցներ որոնեն։

Դիտող.

ՀԱՄԱԽՈՒ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳԾԻ ՀԵՏԵՒԱՆՔԸ

—

Ապրիլի վերջում հնարիւ Աղան-բէկ Խաչանեանցը, որը երկու ամիս տեղումն աշխատում էր, պ. Գ. Ղուկասեանի գրասենեակում ժողով տեղի ունեցաւ, որպէս զի մի ակցիոներական ընկերութիւն կազմուի Նաւահի կայարանից գծի շարունակութիւնը տանելու մինչև Համախի։ Ժողովին մասնակցում էին պ.պ. Ղուկասեան, Մանթաշեան, Արաֆելեան, Աբամեան, Բուդագեան և այլք։ Գ. Խաչանեանը ցոյց տուաւ թէ ապագայ արդիւնքը և թէ ամբողջ գնաւոր բնակչութեան ցաւալի վիճակը, որի վերկութիւնը կախուած էր նորկայ ժողովից, ուշացրից և այն, որ Համախում կըզգուշանան այնպիսի մարդիկ, որոնք բաժանուած պայերից մաս կըվերցնեն։ Համախուց տասցուած նախահաշիւը երկար ու բարակ քննելուց յետոյ, հասան այն եզրակացութեան, որ Նաւահի կայարանից մինչև Համախի շինուելիք գծի ծախսը մօտաւորապէս $1^1/_2$ միլիոն րուբլի կըլինի, առանց կառավարութեան օգնութեան, որը խոստացել էր տեղները տալու։ Այնուհետև ապագայ արդիւնքի վերաբերեալ երկու ժամ խօսելուց և տաք-տաք վիճաբանութիւնից յետոյ, ժողովականները միաձայն վճռեցին խնդիրը թողնել անհետաձգ, պատճառաբանելով թէ՝ ծախսուելիք գումարից բանկային պրոցենտ չի կարելի ստանալ, ուր մնաց օգուտ։ Եւ այդպիսով Բագուի միլիոնատէրերը միանգամայն հրաժարուեցին օգնելուց։

Մենք կրկին ու կրկին կրկրկնենք մեր նախկին խօսքը, որ շամախեցոց փրկութիւնը կախուած է իրենց անդուլ ներում դիզուած ոսկիներից։ Եթէ քաղաքի բնակիչներից պ.պ. Լալայեանը և Անտոնեանը, եղբ. Թառայեաններըը, Ս. Միրզոյեաններըը, Դոլգաևանը, Նազարեանը, Պրիկաշչիկովը, Պալարեանովը, Գրուշենկովը, Վոլկովը, Մահարամովը, Մահմեդովը, Սկանդարովը, Ալիևը և այլք, իրենց ունեցածի մի քառորդ բաժինը հրապարակ բերեն և մի ակցիոներական ընկերութիւն կազմեն և ուղիները կառավարութիւնից ստանան, առանց դէպէն ընկնելու երկաթուղու գիծը կը յաջողեցնեն։ Մանաւանդ, որ տեղիս ժողովականներից պ. Բուդագեանը (ինչպէս ինքն է ասում) ամեն լոպէ պատրաստ է երեք հարիւր հազար րուբլով նպաստելու այդ գործին։

Ս. Մ. Գ.

Բագու, 1 մայիսի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍՊԱՆԻԱ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

Կի-Վեստից հեռագիրը հաղորդից ըստ պանիացիների Կարդենասի մօտ ապրիլի 29-ին տարած յաղթութիւնը։ Այդ հեռագիրը ամերիկական աղբիւրից է, ուստի շատ հասկանալի է, որ այդտեղ ամերիկացիների կրած պարտութիւնը մեղմ գոյներով է նկարագրուած։ Միևնոյն ժամանակ Հաւաննայից ուղարկուած մի ուրիշ հեռագիր հաղորդից, որ ապրիլի 30-ի առաւօտեան ամերիկական նաւերը ռմբակոծել են Սիէնֆուէգոսը, որի ժամանակ ամերիկական 8 մեծ բարկասները փորձել են ադմիրալերը ափ հանել ապատամբների համար։ Սակայն ամերիկացիները սպասած են եղել յետ նահանջել։ Վերջապէս երրորդ հեռագիրը հաղորդից, որ ամերիկացիները 8 ժամուայ ամրակոծութիւնից յետոյ սիրել են Սան-Խուան քաղաքին Պուրտո-Ռիկո կղզում։ Այս բոլոր հեռագրները ցոյց են տալիս, որ կուռող կողմերն Աղանտեան ովկիանոսում արդէն լուրջ ընդհարումներ են սկսել։

—Երբ Ուաշինգտոնում լսացան, որ սպանական համախումբը վերադարձել է Կադիկս, այնտեղ որոշեցին անյապաղ ձեռնարկել Կուբայի և Պուրտո-Ռիկոյի զբաւման գործին։ Միացեալ Նահանգների ծովային իշխանութիւնը պատուէր է տուել 16 հակա-ականաու չինելու։ Տամպից «Vussic» նաւը երկու զօրագունդ է տանում Կուբա կղզին ափ հանելու։ Նոյն այդ նաւը տանում է 7,000 հրացան, 200,000 փամփուշտ, արագաձիգ թնդանօթներ և այլ մթերքներ։ Կուբայի այդ արշաւանքին մասնակցելու համար գնում է գնդապետ Մայլսը իւր շտաբի հետ։ Բացի դրանից, Շիկամանգի բոլոր զօրքերին հրաման է արձակուած պատրաստուել պատերազմի համար. ընդհանին երկու հեծելագունդ գնում են Տամպ, երկուսը—Նոր-Օրլէան և երկուսը—Մոբիլիէ։ Նահանգները կարգադրութիւն է ուղարկուած կիրակի օրը մաղթանքներ կատարելու, որ Աստուած ամերիկական զէնքին յաղթութիւն շնորհէ. բացի դրանից, կարգադրուած է հոգեհանգիստ կատարել պատերազմում սպանուած ամերիկացի զինուորների համար։

—Մինչդեռ ամերիկացիները պատրաստութիւններ են տեսնում Կուբան գրաւելու, միւս կողմից սպանիացիները եռանդով աշխատում են ամրացնելու այդ կղզու ափերը։ Նոր ամրութիւններ են շինուած, որոնք իրար հետ միացած են հեռագրաթելերով։

—Հայրենասիրութիւնը ամերիկացիների մէջ իւր գագաթնակէտին է հասել։ Այսպէս՝ «Times»-ին Տամպից գրում են, որ հրետանաւոր Ջոն Եակոբ Աստորն առաջարկել է իւր հաշուով ռմբաձիգ գունդ կազմակերպել և այդ բանի համար 10,000 ֆունտ ստեռլինգ է տուել։ Բայի դրանից, նա իւր վրայ է առել այդ գունդը բոլոր հրետանիներով վերազրելու ծախքերը, իսկ իրեն պատկանող երկաթուղիներով միւս զօրքերի տեղափոխութիւնը յանձն է առնում ձրի կատարել։ Վերջապէս, նոյն Աստորը ծովային մինիստրութեան է առաջարկել իւր վաճառը զբօսանաւը իբրև կանոնաւոր յածանաւ։ Հարուստ դասակարգի շատ երիտասարդները, մանաւանդ ուսանողները կամաւոր գինուոր են գնում։ Նոյն Տամպում այժմ կամաւորներից մի գունդ է կազմակերպուած յայտնի Ճանապարհորդ Շեկսլերի առաջնորդութեամբ, որը հագցրել և զինել է իւր գունդը իւր սեպհական հաշուով։ Հիւսիսային գինուորները հարաւային նահանգներով անցնելիս՝ ամեն տեղ ցնծութեամբ են ընդունուում։

ԽՈՒՂՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

—

Բերլինի լրագրների թղթակիցները հաղորդում են Իտալիայում տեղի ունեցած խռովութիւնների մանրամասնութիւնները։

Մայիսի 7-ը (ն. ս.),—գրում է «Berliner Tag.»-ի թղթակիցը,—սարսափների օր էր Միլանում. այդ օրը կարելի է պատմէչների օր անուանել։ Պատմէչները էին կանգնեցրած ամեն տեղ։ Ժողովրդի և զօրքերի միջև տեղի ունեցած ընդհարումից և հեծելազօրի յարձակումից յետոյ, պատմէչները բանեցին ամեն տեղ, ինչպէս սունկերն անձրևից յետոյ։ Շրջաբոչ երկաթուղու վագոնները, օմնիբուսները կատակուած էին իրար վրայ, իսկ նրանց վրայ թափել էին այստեղից-այնտեղից պոկած գներ, լուսամուտների վեղկեր, աթոռներ, սեղաններ և այլն։ Միլանի բոլոր բանուորները սոսկ վրայ էին. մանաւանդ մեծ ուռանդով պատմէչներ էին կանգնեցնում աղջկերք և կանայք։ Առաւօտեան ժամը 11-ին «Corso Venecia»-ում սալայատակը քարուքանդ էր արուած և Սապօրիի պալատը բռնուած էր ամբոխով։ Երբ զօրքերը մօտեցան, նրանց վրայ սկսեցին տարբանակներ պարզել և քարեր տեղալ ինչպէս պատմէչներից, այնպէս և պալատի լուսամուտներից ու տանիքից, որի վրայ կարմիր դրօշակ էր ծածանւում։ Վերջ ի վերջոյ հեծելազօրը դրաւեց պատմէչը. այդտեղ ամբոխից շատերը սպանուեցին և վիրաւորուեցին, իսկ կենդանի մնացածները յետ նահանջեցին և ամրացան միւս պատմէչների եւս։ Օրուայ ժամը 2-ին գինեբարներից մէկը հրամայեց հրացան պարպել Via Torino-ում հաւաքուած ամբոխի վրայ. այդտեղ ևս շատերը սպանուեցին և վիրաւորուեցին։ «Grand Hôtel»-ի մօտ գըտնուած մի տանից գինուորների վրայ քարերի և աղիւսի կարկատ տեղայ։ Զինուորները յարձակում գործեցին այդ տան վրայ և գրաւեցին, որի ժամանակ նրանցից շատերը վիրաւորուեցին։ Միևնոյն ժամանակ հետևակ զօրքը գնում էր յարձակում գործելու Սանտա-Պրոչէ կամբրջի մօտ կանգնեցրած պատմէչի վրայ։ Նրա յետևից գնացող հեծելազօրը յանկարծ քարերի այնպիսի մի կարկտի հանդիպեց, որ ստիպուած էր յետ նահանջել։ Porta Ticinese-ի մօտ վերոյայտի մի մեծ կռիւ է պատահում։ Պատմէչներից մէկը սաստիկ հրացանաձգութիւնից յետոյ գրաւում են հէնց նոր վրայ հասած ալպեան հրացանաձիգները։ Շատերն են սպանում։ Piazza Chiusa-ում բռնմբիւ հետաքրքրուողները էին հաւաքուած, դրանց թւում կանայք և երեխաներ։ Այդտեղ են գալիս զօրքերը և առանց նախազգուշացնելու հրացաններ են պարպում։ Piazzu Vetra-ում զօրքերին ռմբակոծում են քարերով տների կտուրներից։ Զինուորները ամբոխին այդ կտուրներից հետացնում են հրացանների գնդակներով։ Ամեն տեղից հրացանաձգութեան, հետաքրքրութեան մեծ դադիւթը, որ կայսրն այցելից պրինցին և նուէրներ չանձնեց. այնուհետև պրինցը և կայսրը թարգմանի հետ մտան հարեան սենեակը, ուր երկար ժամանակ զրուցատրում էին։

ՄԱԴՐԻԴ.—Բարցելոնի ծովային իշխանութիւնը հրաման ստացաւ առևտրական մեծ նաւերին թոյլ չտալ դուրս գնալու, որովհետև մտադրութիւն կայ այդ նաւերը զինելու և օժանդակիչ յածանաւեր դարձնելու։

ՈՒԱՇԻՆԳՏՈՆ.—Սամխոնը ծովային մինիստրութեանը տեղեկագրել է, որ ինքը վճռել է գնալ դէպի հարաւ և նաւեր կանգնեցնել այնտեղ, որպէս զի փակի Սանտ-Նագոյի և Սիէնֆուէգոսի մուտքը, թոյլ չտայ, որ Հաւաննայի նահանգապետ տեղապահ զօրքի համար պաշարներ ափ հանուին, և միևնոյն ժամանակ ուժեղացնի պաշարող հարաւային թոյլ նաւախումբը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կրիւզերի սրախօսութիւնը. — Ցրանսվաալի նախագահի մասին մի հետաքրքրական անեկդոտ է պատմուած «National Review» հանդիսում։ Նախագահի չահել ազգականներից մի քանիսը դիմել են նրան և պաշտօն են խնդրել։ Նախագահ Կրիւգերը քիչ մտածելուց յետոյ՝ ասում է. «ես ձեզ համար ոչինչ չեմ կարող անել, որովհետև սէբութեան մէջ բոլոր բարձր պաշտօնները բռնուած են, իսկ ոտոր պաշտօններ կատարելու համար էլ դուք այնքան գիտութիւն չունէք»։

—

Սկոտոգրաֆ.—«Daily News»-ը հաղորդում է, թէ գոկտոր Ռոսսելը առանց լուսոյ օգնութեան մթնումը լուսանկարելու միջոց է գտել։ Մի թղթակից առաջարկում է այդ միջոցը անուանել «սկոտոգրաֆ», որովհետև անգլիացոց լեզուի մէջ այդպիսի խօսք արդէն գոյութիւն ունի, որ նշանակում է՝ «մթնումը գրելու գործիք», նոյնպէս այդ լեզուի մէջ գոյութիւն ունի «Սկոտոսկոպ» — լուսարձանական գործիք, որի օգնութեամբ կարելի է առարկաները տեսնել մթնումը։

Եթէ այս անունները՝ «սկոտոգրաֆ» և «սկոտոսկոպ» սովորական գործածութեան մէջ մտնեն, յուսով ենք, որ մեր Վենեսկի ու Վեննայի պատասխանի հայերը դրանց յարմար բառեր կըգտնեն։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ԲԵՐԼԻՆ, 5 մայիսի.—«Post»-ն ասում է, որ Չեմբերլէնի ճառը ազդուկ է հանել Անգլիայի սահմաններից դուրս։ Քրանսիական լրագրներում Չեմբերլէնին սիրով անուանում են գրգռիչ. վերմանական մամուլի մի մասի մէջ նա նոյնպէս վատ գոյնով է ներկայացւում, որովհետև Անգլիայի դէմ Գերմանիայի ունեցած գաղթային-քաղաքական շատ անախորժութիւնները վերագրւում էին զբխաւորապէս նրա հակառակ ազդեցութեանը։

«National Zeitung»-ը ծաղրում է «New-Iork Times»-ի Գերմանիային վերաբերեալ նկատողութիւնը։ Գերմանիան,—ասում է յիշեալ լրագիրը,—որ ամենքի հետ ուզում է հաշտ ապրել, քանի որ չեն խանգարում իւր շահերը, ի հարկէ, չի միանալ ֆանատասիկական անգլոսաքսոնական դաշնակցութեանը ցեղային յարանմանութեան համար։ Սակայն, մի չարաթից յետոյ Չեմբերլէնի ճառի մասին արդէն ոչ ոք չի խօսիլ այլ ևս։

«Vess. Zeit.»-ը կատածում է, որ Անգլիան դաշնակցութիւններ հաստատելու ընդունակութիւն ունենայ և հարցնում է. «րտեղ կըգտնի Անգլիան դաշնակիցներ։ Ի հարկէ, ոչ յանձին Ֆրանսիայի. Աւստրիան, ինչպէս բացատրեց Գոլուխովսկին, արևելեան խնդիրների վերաբերմամբ սերտ համաձայնութեան մէջ է Ռուսաց կայսրութեան հետ. Գերմանիան ոչ մի հիմք չունի պատճառում սկսելու Ռուսիայի հետ արևելեան Ասիայում նրա ունեցած գործունէութեան համար. Իտալիայի սեպհական գործերն էլ իրեն բաւական են, իսկ Միացեալ Նահանգները լրջօրէն մտածում են մի դաշնակցութեան մասին, որը իրենից զինուորական աւելի շատ գոհեր կը պահանջի, քան իրենք կարող են տալ։

ՊԵԿԻՆ, 6 մայիսի. — Պրուսական պրինց Հենրիխը այցելից այրի Կայսրուհուն և կայսրին։ Կայսրուհին բազմաթիւ հարցեր առաջարկից պրինցին. այնուհետև կայսրը պրինցին ընդունեց ունկնդրութեան մեծ դահլիճում. կայսրը սեղմից պրինցի ձեռքերը, պրինցը յանձնեց Վիլհելմ կայսրի նուէրները։ Կայսրին այցելելուց յետոյ, պրինցը դիտեց քաղաքի նշանաւոր վայրերը և վերադարձաւ ունկնդրութեան մեծ դահլիճը, որ կայսրն այցելից պրինցին և նուէրներ չանձնեց. այնուհետև պրինցը և կայսրը թարգմանի հետ մտան հարեան սենեակը, ուր երկար ժամանակ զրուցատրում էին։

ՄԱԴՐԻԴ.—Բարցելոնի ծովային իշխանութիւնը հրաման ստացաւ առևտրական մեծ նաւերին թոյլ չտալ դուրս գնալու, որովհետև մտադրութիւն կայ այդ նաւերը զինելու և օժանդակիչ յածանաւեր դարձնելու։

ՈՒԱՇԻՆԳՏՈՆ.—Սամխոնը ծովային մինիստրութեանը տեղեկագրել է, որ ինքը վճռել է գնալ դէպի հարաւ և նաւեր կանգնեցնել այնտեղ, որպէս զի փակի Սանտ-Նագոյի և Սիէնֆուէգոսի մուտքը, թոյլ չտայ, որ Հաւաննայի նահանգապետ տեղապահ զօրքի համար պաշարներ ափ հանուին, և միևնոյն ժամանակ ուժեղացնի պաշարող հարաւային թոյլ նաւախումբը։

ԹԵՐ ԵՒ ԴԷՄ

(Նամակ խմբագրութեան)

(Վերջ *)

—

Մալխասեան քահանան տեսնելով՝ որ Արդուինի ժողովուրդը իրեն օձիքից վազ չէ գալիս ու հետզհետէ լոյս աշխարհ է հանում մխութեան ու մոռացութեան մէջ թաղուած գործերը, ուստի ի ծնունդեան անդամին իրեն չնորհուած անդուլ չար կիրքը սատակացնելով՝ սկսեց ժողովրդականներս հայհոյել ու անիծանել։ Որ մի ժողովուրդ իւր սպիտակ քահանայից երբոր ուզղութիւն, հարատած ծառայութիւն պահանջէ, իսկ նա դարձեալ յամառ մնալով՝ ժողովուրդը ակամայ ստիպուած լինի նրա իշխանութիւնը բողոքելու, միթէ իրաւունք ունի այն յամառ, կամակոր քահանան բողոքաւորներին հայհոյել, անիծանել ու սպառնալ... Մալխասեան քահանան իւր չարանախանձութիւնից և կատաղի կրքից մոլեգնեալ՝ բանը վերջապէս այնտեղ հասցրեց, որ նա ժողովրդին տեսնելիս իւր երեսն էր դարձնում, ժողովուրդը՝ իւր երեսը նրանից, իսկ վերջին օրերում իւր տանից դուրս գալը անգամ այլևս իրեն համար վտանգաւոր էր համարում։ Իրեսի վիճակը այսպիսի դառնութեան հասած ժամանակ՝ ժողովուրդը իւր կողմից յատուկ պատգամաւոր ներկայացրեց աղգիս Վեհափառ Հայրապետին, որ միևնոյն ժամանակ մեր գաւառապետի միջամտութիւնը ևս հասած էր, Նորին Վեհափառութիւնն իսկոյն հրամայեց նորահաստատ թեմական առաջնորդին հեռացնել Մալխասեան քահանային Արդուինից։ Երբ մեր գործակալի միջոցաւ Մալխասեանին հասաւ այդ հրամանը, մի կիրակի օր, վերջին անգամ, մանկտով եկեղեցի՝ յանկարծ երեսը դարձնելով ժողովրդեան՝ ի միջի այլոց ասաց. «Հ՛կարծէք, որ հոգևոր իշխանութիւնն է հեռացնում ինձ այստեղից, այլ ես ինքս անձամբ եմ խնդրել թեմական առաջնորդից տեղափոխել ինձ Արդուինից ուրիշ տեղ»։ Ահաւասիկ Մալխասեան քահանան ևս իւր այս խօսքովը հերքում է պ. Յարութիւնեանի վերև առաջ բերուած «բայց... բայց... մեր թեմական հոգևոր իշխանութիւնը հեռացրեց հայր Մալխասեանին Արդուինից...» խօսքը։ Ուրեմն ընթերցողը պէտք է քաջ իմանայ, թէ իրողութիւնը ինչպէս է այլափոխուած և թէ պ. Ս. Յարութիւնեան որ ասպիճան յանդգնաս պարսաւում է թեմական իշխանութեան։ Մալխասեան քահանան վերջապէս մեր եկեղեցում արած իւր այդ բանախօսութիւնը այսպիսի անէծքով կնքեց. «Ո՛վ որ իմ այսուհետև (Արդուինից) հեռանալուս վրայ ուրախանում է, աչ ձեռքը դէպի վեր բարձրացնելով՝ ասաց, իմդրում եմ Աստուծուց, որ այս ուրախութիւնից աւելի ուրախութիւն չտայ նրան, իսկ ով

*) Տես «Նոր-Դար» № 77։

որ արդմում է, նոյնպէս այս արդմութիւնից աւելի արդմութիւն չտայ»։ Եւ խօսքն դուրս եկաւ եկեղեցուց... *)։

Յարձակուլ՝ Մալխասեան քահանան մեր գաղթոցի դահլիճում խմբուած ժողովրդին հայհոյեց ասելով այսպէս, թէ՝ «դուք ինձ և իմ կնոջ յիշոցներ էք տուել, ուստի ես այն բոլոր յիշոցները եղածովը վերադարձնում եմ հայհոյողներիդ» **)։

Յարձակուլ՝ Մալխասեանը քահանայ ձեռնադրուելուն պէս փոխանակ յարգելու, հնազանդութիւն ցոյց տալու իր ծերունի աւագ քահանային, սկսեց սաստիկ առելութիւն, ըմբոստութիւն ու անհնարելի թշնամութիւն ցոյց տալ նրան, և այսպիսով վերաւորել ժողովրդի սուրբ զգացմունքը։ Թողնենք նրա ապած բազմաթիւ դատաճանութիւնները ծեր քահանային՝ միայն երկու բանով բաւականանանք առայժմ։ Մալխասեանը գրեթէ հազիւ երկու ամսուայ ձեռնադրուած քահանայ էր, որ եկեղեցւոյ գաւթում յանիրաւի յարձակուելով աւագ ծեր քահանայի դէմ՝ ասաց նրան ժողովրդականաց առաջ. «մահներս կընդոստեմ, աչքերդ կրհանեմ դուրս»։

Յարձակուլ նոյն քահանհինդ տարուայ ամրիծ աւագ քահանային՝ բնաւ առանց հիման և առանց ստուգելու՝ գանձանակի գող ղրպարտելով արգելից նրան եկեղեցում գանձանակ չրջկընել, որով մեծ գայթակղութիւն ու դրգռում յարուցից ջերմեռանդ ու միամիտ ժողովրդոց մէջ։

Արդ, պ. Ս. Յարութիւնեան, այս ճըշմարիտ փաստերով արդեօք չէք բաւականանալ համոզուելու, թէ Արդուինում գոյացուած տարաձայնութիւնների և բոլոր չարեաց պատճառն ու հիղինակը ձեր գոված հայր Մալխասեանցն է եղել, որին դուք վոտահ կերպով վերագրում էք արդուինցի «անբարեմիտ բողոքաւորներիս» աւելացնելով նաև, թէ՝ «հոգևոր Իշխանատեսի կողմից այն ասոլճան արդար ճանաչուեց հայր Մալխասեան, որ... պատասպեսի միջոցով անբարեմիտ բողոքաւորներին և այլն, ասում էք, ապահարկուեց ի կարգ և ի զգուշութիւն հրաւիրել»։ Ձեր այս տողերը, տեսէք ահա, թէ որքան հակասում են ճիշտ իրողութեան ու փաստերին, որովհետև 1) վիճակային կոնսիստորիան իւր 1894 ամի սեպտ. 13-ի № 3993 և 3998 հրամանագրերով Մալխասեան քահանային Արդուինից հեռացրեց, «ըստ թախանձանաց ժողովրդեան և պատուիրանի Նորին Վեհափառութեան» խօսքերը արձանագրելով. ուրեմն էլ որտեղ է մընում միևնոյն հոգևոր Իշխանատեսի «արդար ճանաչելը» նրան։ 2) պատասպեսը ում առաջադրութեամբ և որ անբարեմիտ բողոքաւորներին հրաւիրեց ի կարգ և ի զգուշութիւն, որ մեզ յայտնի չէ և չի իրականացած այդ մինչև այսօր։ Եթէ յանցաւորը «անբարեմիտ բողոքաւորներն» էին, հարցնում ենք ձեզ, էլ ապա ինչի հեռացուեց Մալխասեանը Արդուինից։ Հետևաբար որ օրէնքով, որ արդար դատաստանով արդարացաւ Մալխասեանի նման խոտորաբար, չարամիտ, հայհոյիչ, անիծիչ և կրօնաս սպառնացող քահանան. այսպիսի յանցանքներ, ասացէք խնդրենք, միթէ ներելի են հայ քահանային։ Նա՝ թէ որ անմեղ էր, ինչ իրաւունք ունէր իրրև Քրիստոսի աշակերտ հայհոյել ու անիծել ժողովրդին երբ կարող էր օրէնքով արդարանալ. եթէ միաւորը էր, դարձեալ ինչ իրաւունք ունէր անիծել, հայհոյել և մինչև անգամ ժողովրդոց կեանքի դէմ սպառնալ...ուստի որ անաչառ և որ անկողմնապահ քննիչ Մալխասեանի այդպիսի յանցանքների մասին արձանագրութիւն կազմեց ու յանձնեց ծայրագոյն հոգևոր իշխանութեան անօրէնութեանը. իրաւքանչիւր քննիչը գալով Արդուին՝ փոխանակ սրբագրելու հեռացուած Մալխասեանի սխալ արարքները, ընդհակառակն ամենայն համարձակութեամբ կարող ենք ասել, որ նա այստեղ՝ Արդուինում, բառի բուն նշանակութեամբ, քննութիւն չէ կատարած. նա սոսկ մի քննութիւն կատարեց մի դիշերուայ կէսին և ներկայացրեց կաթողիկոսական դիւանատունը... Այո, նրան էջմիածնից ուղարկեցին մի որոշ նպատակի համար և ոչ թէ արդարութիւնը ստուգելու և իմանալու համար. վասն զի անցեալում տեղի գտած կուսակցական մի ինչ-որ... գործի պատճառով յատկապէս ի վրէժ չարժեալ, քննութիւն նշանակելուց մի քանի ամիսներ առաջ, բնաւ չլսուած, ապօրինի մի վճիռ ու հրաման էին արձակել դիւանատնից տեղւոյս մի ուրիշ պաշտօնեայի մասին, որպիսի հրամանը յանուն օրինաց խիստ ու զօրեղ ընդդիմութեան հանդիպելով՝ ըստ սովորութեան՝ իսկոյն յետ առնուեց. բայց դրանից աւելի ևս մեծ վիրաւորանք կրելով էջմիածնի վարիչներից, որոնք սկսեցին այնուհետև ձևական հնարներ մտածել ու հանգարտ միջոցներ ձեռք առնել, և ահա Կարսից Արտուին իբրև քննիչ ուղարկեցին Մինաս քահանային «գժտութիւնք ի մէջ քահանայից և ժողովրդոց» խորհրդաւոր բառերը պատրուակելով։ Ուստի ակը Մինասի քննութիւնն ու քննչութիւնը զօրեղ և դրական փաստերով արդէն հերքուած է տեղւոյս հայր գործակալի և եկեղեց. հրէշտեսանի անցեալ 1897 ամի յունուար 27 և 29-ի №№ 34 և 9 ընդարձակ պարզաբանեալ յայտարարութիւններով, որոնք մատուցուեցան Նորին Վեհափառութեան վճռակ. կոնսիստորիայի միջոցաւ։

Ի վերայ այսը ամենայնի պէտք է նըկատել, որ կաթողիկոսական դիւանատունը իւր նպատակին հասնելու ջանքով Թիֆլիսի թեմում, յափշտակելով այդ թեմական Առեանից իւր իրաւունքն, ինքըն իրեն քննութիւն նշանակեց ու օտար թեմից քննիչ ուղարկեց այստեղ հակառակ կարգ ու կանոնի, որով բըռնաբարուեց թեմական Առեանի իրաւունքներն, որովհետև դիւանատունը, մեր կարծիքով, իրաւունք չունէր այս օրինակ քննութիւններ կատարելու։

Արդ, վերջ տալով մեր այս ներկայ պարկեշտ հերքման՝ պատասխանում ենք բամթումի եկեղ. երէցփոխ պ. Ս. Յարութիւնեանին, որ Մալխասեան Կարապետ քահանան մինչև այս րոպէիս բընաւ արդարացած չէ մեզ համար, ոչ օրէնքով, ոչ օրինաւոր, անաչառ քննութիւնով ու քննիչներով և ոչ արդար դատաստանով։ Իսկ վերջին անզամայ հրամանը՝ նրա կրկին Արդուինի վերադառնալու նկատմամբ, ինչպէս առաջ է բերում պ. Ս. Յարութիւնեան որպէս ապացոյց,—այդ երբէք արդարանալ չէ նշանակում, որովհետև, ինչպէս յայտնի եղաւ ընթերցողին, Մալխասեան քահանան իրրև խոտորաբար ու չանցաւոր Արդուինից հեռացուած էր ծայրագոյն հոգևոր իշխանութեան անօրէնութեամբ ըստ թախանձանաց ժողովրդոց. սակայն երեք տարի և երեք ամիս անցնելուց վերջը դարձեալ միևնոյն իշխանութեան հրամանով նորից վերադառնալը մեզ երբէք չէ զարմացնում, վասն զի այս վերջին ժամանակներս էջմիածնում կատարուած տխուր ու ցաւալի, մեկը միւսին հակասող հրամաններն ու գործողութիւնները մեզ յայտնի չեն... ապա ուրեմն, պ. Ս. Յարութիւնեան, սէրտ է խնամոք, որ ուրիշի ձիու վրայ նստելով՝ ուղածին պէս չեն քշել...

Տեղացի.

Արդուին, 15 ապրիլի.

*) Եւ այդպիսի մարգուն ժողովուրդ են յանձնում հովուելու, և ուրիշ տեղի վրայ քահանայ են նշանակում։ Խմբ.

**) Աֆերիմ տէր բարա։ Խմբ.

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ՅՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ

(Սոլոլակ, Սադովայա փողոց, № 64)

(սեպհական տուն)

Հեռախօս № 230

Երեսնիկ հիւանդների ընդհանուր ընդունելութիւնն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամը 2—4 ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մանաւոր ընդունելութիւն՝ ամենայն օր՝ ժամը 8—10 առաւօտեան—վճարը 2 ր.։ Դիշերօթիկ հիւանդները և ծննդաբերը կանոնք ընդունւում են դիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշում է ըստ դասակարգերի։ Հունտրները ձրի են։ Գինեկոլգիական բաժանմունք ընդունողները վճարում են 1 ր 50 կ. մինչև 8 ր. մի օրուղիշերուայ համար. ծննդաբերական բաժանմունքը մանողները—1 ր. մինչև 5 ր. մի օրուղիշերուայ համար։ Երկունքից աղաւելը 10 ր. մինչև 50 ր.։ Անդամահատութիւնը ըստ համաձայնութեան։ Երեսնիկ բոլոր հիւանդները դեղերն ևրնեիր ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի։ Հունտրների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր և տեսուչ
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՏՆԱՅԻՆ ՎԱՐԺՈՒՀԻ

գաւառական քաղաքում՝ մի լաւ ընտանիքի մէջ հայերէն ու ռուսերէն պարապելու երկու երեխայի հետ։ Պայմանները շատ յարջող են։ Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրատան պրասենեակը, Պետրովի տպարանին կից, Գոլովինսկի պրոսպեկտի վրայ։

(1029) 2—1.

ՆՈՐ ԼՈՑՍ ՏԵՍԱԾ

ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻ

ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՃԹԱՐԴ

(Խաչատուր Արովհանի երկերի տպիչ)

Հեղինակին դիմողները (Ներսիսեան ղբղբանոց) ճանապարհածախք չեն վճարում։ գինն է 30 կոպ.

(1030) 20—1

Ա. ԳԵՆԿԻՆ ԵԻ ԸՆԿ.

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԻՐԵՐ

Москва, Пассажъ Солодникова, մուտքը Նեգլինից։

ԱՄԵՆ ԲԱՆ

զանազան կահ-կարասիք, բրնձ, նկարներ, դաշնամուրներ, հայելիներ, ժակոր և այլ ու այլ իրեր։
ԼԻԱԿԱՑԱՐ ԿԱՀԱՒՈՐԱՆՔ

(M.) 10,167 10—6

Հաւատարի էջմիածնեցոց եկեղեցւոյ յարգելի ծխականներին խընդրւում եմ ներկայ գտնուել առաջիկայ կիրակի, մայիսի 10-ին, առաւօտեան 10 ժամին, նոյն եկեղեցւոյ ուսումնարանի շինութեան մէջ կայանալիք **ԾՈՒՑԱՆ ԺՈՂՈՎԻՆ**, որի պարապմունքի առարկան լինելու է եկեղեցւոյ մուտք ու ծախքի նախահաշուի քննութիւնը։

Երէցփոխ Դրիսոր Նալչունեան
2—2.

(1028)

Վրաստանի և Իմերէթի Հայոց Վիճակային Կոնսիստորիայի Ատենի մէջ նշանակուած է **ԱՃՈՒՐԴ** սոյն մայիսի 8-ին առանց կրկնաձրդի կապալաւ տալու եկեղեցական կղզին, որ գտնւում է Վանաց աւագ եկեղեցւոյ հանդէպ։ Մասնակցել ցանկացողները պիտի ներկայանան սահմանեալ ըրաւական, իսկ պայմանների հետ կարող են ծանօթանալ Կոնսիստորիայի դիւանատունը։

Անդամ Կոնսիստորիայի՝ Թադէոս վարդապետ.
3—3

(1027)



Ընտրեալ այն հանգամանքի, որ իմ չինած ժամացոյցները մեծ քանակութեամբ վաճառւում և պատրաստւում են նոր կատարելագործուած ձևով, ես հնարաւորութիւն ունեմ 1897 թ. յուլիսի 1-ից վաճառելու ամենագեղեցիկ և գիմացկուն **ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ ԱՄԵՐԻԿԱՆ ՈՍԿՈՒՑ**, որոնց մինչև անգամ մանրագէտները գժուարութեամբ են կարողանում գանագանել իսկական թանկագին ոսկեայ ժամացոյցներից։ Անկերը փակ է, մեխանիզմը ամենալաւ շինուածքով (արժանացած է արծաթի մեդալի Ժընեի ցուցահանդէսում 1896 թ.), գեղեցիկ չղմծայով և, պատուիրողի ցանկութեամբ, իւր ազգանուան սկզբնատառերով վերին խուփի վրայ։

Գինը փոխանակ 18 և 20 րուբլու

ՄԻՄԻԱՅՆ 10 ԵՒ 12 ՐՈՒԲ.

Ամերիկայում այս ժամացոյցները վաղուց արդէն գործածութիւնից հանել են իսկական ոսկեայ ժամացոյցները և ներկայումս մեզնում սկսել են սրանցից գործածել։ Նոյնպիսի կանանց ժամացոյցներ 1 րուբլով թանկ։

ԳՐԱԻՈՐ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ Է ՏՐՒՈՒՄ 6 ՏԱՐԻ ԺԱՄԱՆԱԿՈՎ։

Ուղարկում եմ կատարելագործած ժամացոյցներ 2 ր. կանխավճար ստանալուց յետոյ, իսկ մնացածը—վերադիր վճարով։ Հասցէ՝

Ш. ГЕЙЛЕРЪ

Складъ женевскихъ часовъ въ Варшавѣ, Королевская, 27—29.

Բազմաթիւ շնորհակալական նամակներ և կարծիքներ։

Կեղծումներից խուսափելու համար, իւրաքանչիւր ժամացոյց ունի ֆիրմայի պլոմբը, որ հաստատուած է ատաղի և մանուֆակտուրի դեպարտամենտից։

(M.) 20427 10—2

Թիֆլիսի «Կենդրոնական դրավաճառանոցում» վաճառւում են

ԴԱՐԵԳԻՆ ՅՈՎՍԵՓԻ ԼԵՒՈՆԵԱՆԻ

„ՀԱՅՈՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ“

անուն աշխատութեան սակաւաթիւ օրինակները։

Պատմակ. տեսութիւն հայ լրագրութեան սկզբից մինչև մեր օրերը.

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ,

(Արժանացած է Սահակ-Մեսրովբեան դրական մրցանակաբաշխութեան 1894 թուականի առաջին մրցանակին)

ԳԻՆԸ 3 Ր. ԿԱՄ 8 ԳՐ.

Նոյն տեղից կարելի է ձեռք բերել նաև նոյն հեղինակի

«ՀԱՅ ԱԶՈՒՊՆԵՐ»-Ը

Բոլոր հայ գուսաններն իրենց կենսագրութեամբ ու երգերի նմուշներով. աշուղական արուեստը. աշուղի կեանքը. աշուղը արտէս դրոշ. հայ հրաժշտական գործիքները և այլն։

ԳԻՆԸ 30 Կ. ԿԱՄ 1 ԳՐ.

Ճանապ. ծախսը գրավաճառանոցի վրայ է։ 10—7

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՒԲԵԱՆԻ

Ընդունում է երեխեք, կիսագօշակաւոր և դիշերօթիկ աշակերտներ։ Պատրաստում է գիմնազիաների, կադետների կորպուսի, զեմնիներների, ըէալական և այլ ուսումնարանների համար։

Փոքր պատրաստականում երեխաներ ընդունում են տասից քսնեամեան, վեց տարեկանից սկսած։ Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումն առարտած մասնագէտներ, գիմնազիական ուսուցիչներ։ Առանդին առարկաներն են՝ կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, յատնաց և վրաց լեզուներ, թուաբանութիւն, պղպերգ, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն (ռուսաց և ընդհանուր), բնական գիտութիւն, նըկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն։ Ուսումնարանում կայ ամեն օր գերմանական և ֆրանսիական լեզուների պրակտիկա։

Հասցէն՝ ТИФЛИСЪ. Гановская ул., № 11. 3-րդ գիմնազիայի մօտ։ 10—3

Дозв. цензурою. Тифлисъ, мая 7-го дня, 1898 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. проспектъ, домъ № 12